ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 39

10 հունիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-012-0008-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.81583 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ 26.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԱՐԱՆԸ ԵՎ 108.45 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիավան բնակավայրում գտնվող 08-012-0008-0013 կադաստրային ծածկագրով 0.81583 հեկտար մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, նրանում առկա 26.62 քառակուսի մետր մակերեսով

պահեստարանը և 108.45 քառակուսի մետր մակերեսով շվաքարանը (հետագայում անշարժ գույք) (վկայական N 09032020-08-0018, տրված՝ <<6>> նոյեմբերի 2017 թվական, հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք Անիավան բնակավայր, 11-րդ փողոց, 3 պահեստ) քարի վերամշակման արտադրություն կազմակերպելու նպատակով 30 (երեսուն) տարի ժամկետով, մրցույթով տրամադրել վարձակալության:

2. Անշարժ գույքի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը հաստատել 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Անշարժ գույքի մրցույթը կազմակերպելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝ Մարտիրոս Դարբինյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Լևոն Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի օգնական գյուղատնտեսական հարցերով/

Մարտիրոս Միրոյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի վարչական ղեկավար

Գագիկ Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

4. <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մրցութային հանձնաժողովին օժտել հրապարակային սակարկություն կազմակերպելու լիազորություններով (մրցույթի կազմակերպիչ):

5. Հաստատել մրցույթի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	Դեմ՝ - 0	Ձեռնպահ՝ - 0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ			
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ			
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ			
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ			
ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ			
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հունիսի 10
Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 39 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆԻԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-012-0008-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.81583 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ 26.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԱՐԱՆԻ ԵՎ 108.45 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆԻ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը համարվող Անիավան բնակավայրում գտնվող 08-012-0008-0013 կադաստրային ծածկագրով 0.81583 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակություն հողամասը, նրանում առկա 26.62 քառակուսի մետր մակերեսով պահեստարանը և 108.45 քառակուսի մետր մակերեսով շվաքարանը (հետագայում անշարժ գույք) (վկայական N 09032020-08-0018, տրված՝ <<6>> նոյեմբերի 2017 թվական, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք,Անիավան բնակավայր, 11-րդ փողոց, 3 պահեստ) քարի վերամշակման արտադրություն կազմակերպելու նպատակով մրցույթի միջոցով վարձակալության տրամադրման մրցութային հանձնաժողովի գործունեության կանոնները:

2.Մրցույթի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիավան բնակավայրում գտնվող 08-012-0008-0013 կադաստրային ծածկագրով 0.81583 հա մակերեսով հողամասը, նրանում առկա 26.62 քառակուսի մետր մակերեսով պահեստարանը և 108.45 քառակուսի մետր մակերեսով շվաքարանը մրցույթով վարձակալության տրամադրելու, վարձավճարի մեկնարկային չափն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 39 որոշմամբ ստեղծված մրցութային հանձնաժողովը, հետևյալ անհատական կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝ Մարտիրոս Դարբինյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Լևոն Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի օգնական /գյուղատնտեսական հարցերով/

Մարտիրոս Միրոյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի վարչական ղեկավար

Գագիկ Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

3. Հանձնաժողովը ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիավան բնակավայրում գտնվող 08-012-0008-0013 կադաստրային ծածկագրով 0.81583 հա մակերեսով հողամասը, նրանում առկա 26.62 քառակուսի մետր մակերեսով պահեստարանը և 108.45 քառակուսի մետր մակերեսով շվաքարանը մրցույթով վարձակալության տրամադրելու, վարձավճարի մեկնարկային չափն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 39 որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Մրցույթն անցկացվում է սակարկությունների ձևով (դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ), որի ընթացքում հաղթող է ճանաչվում մրցույթի այն մասնակիցը, որն մրցույթի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

5. Մրցույթը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ քաղաք Մարալիկ, Մաղաթյան՝ 2):

6. Մրցույթի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է «Հայաստանի Հանրպետություն» օրաթերթով, http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքով, և լրատվության այլ միջոցներով՝ մրցույթի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ:

7. Մրցույթի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը մրցույթի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերում տեղադրվում է Մրցույթի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ:

8. Մրցույթի կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

9. Մրցույթի մասնակցության վճարի չափը սահմանվում է 2000 /երկու հազար/ դրամ:

10. Մրցույթի կարող են ներկա գտնվել մրցույթի մասնակից չհամարվող անձինք (այսուհետև՝ դիտորդ), ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը:

11. Մրցույթի մասնակից չհամարվող անձանց (դիտորդի) համար մուտքի տոմսի վճարը սահմանված է 1000 (մեկ հազար) դրամ:

12. Մրցույթի մասնակիցները և մասնակից չհամարվող անձիք (Դիտորդ), մրցույթի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

13 Մրցույթի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել մրցույթի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

1) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, մրցութային հանձնաժողովի կամ մրցութավարի նկատմամբ,

2) չխոսել մրցույթի ընթացքում, բացառությամբ սույն պայմաններով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել մրցութային հանձնաժողովի նախագահին լոտի մրցույթը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի մրցույթի ընթացքում միայն մրցութավարի թույլտվությամբ,

4) մրցույթի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ վերադառնալ դահլիճ՝ բացառությամբ մրցութավարի թույտվությամբ,

5) չթաքցնել մրցութավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիավան բնակավայրում գտնվող 08-012-0008-0013 կադաստրային ծածկագրով 0.81583 հեկտար մակերեսով հողամասը, նրանում առկա 26.62 քառակուսի մետր մակերեսով պահեստարանը և 108.45 քառակուսի մետր մակերեսով շվաքարանը մրցույթով վարձակալության տրամադրելու, վարձավճարի մեկնարկային չափն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 39 որոշման համաձայն մրցույթի դրված գույքի՝ վարձավճարի մեկնարկային գինը հաստատված է 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

15. Մրցույթի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

16. Մրցույթի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և նախավճարը վճարելուց հետո մրցույթի մասնակցին տրամադրվում է << Մրցույթի մասնակցի վկայական>>:

17. Մրցույթի կանխավճարը և մուտքի վճարը վճարվում են մրցույթի կազմակերպչին:

18. Մրցույթի վարում է մրցույթավարը: Մրցույթավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով վարձակալել գույքը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան մրցույթավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով: Մրցույթում հաղթած է համարվում մրցույթի այն մասնակիցը, ով մրցույթավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո ներկայացրել է ամենաբարձր գնային հայտը:

19. Մրցույթի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Անիի համայնքապետարանում՝:

20. Մրցույթը սկսվելուց մեկ ժամ առաջ մրցութային հանձնաժողովը /մրցույթի կազմակերպիչ/ իր նիստում գրանցում է մրցույթի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և թույլատրում է մասնակցելու մրցույթին:

21. Մրցույթի արդյունքների մասին մրցույթի անցկացման օրը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են մրցութային հանձնաժողովի ներկա անդամները և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը, ցանկության դեպքում՝ մրցույթի մյուս մասնակիցները:

22. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ վարձակալության իրավունքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

23. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի հետ վարձակալության պայմանագիրը կնքվում է մրցույթի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

24. Սահմանված ժամկետներում մրցույթի պայանագիրը չկնքելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքային բյուջե:

25. Գույքի վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից:

26. Մրցույթը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մրցույթում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

27. Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի մրցութային հանձնաժողովի /մրցույթի կազմակերպիչ/ կողմից:

28. Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1) հայտ՝ սահմանված ձևանմուշով,

2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն

3) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ կազմակերպության հիմնադիր

փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

4) նախավճարի մուծման անդորրագիրը:

29. Մրցույթը կարող է կայանալ մեկից ավել մասնակիցների դեպքում:

30. Մրցութային հանձնաժողովը /մրցույթի կազմակերպիչ/ մրցույթի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացության մեկ օրինակը մեկ օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

31. Մրցույթի արդյունքում վարձակալված գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

32. Մրցույթը համարվում է չկայացած եթե.

1) Մրցույթին ներկայացել է միայն մեկ մասնակից կամ չի ներկայացել որևէ մասնակից:

2) Մրցույթի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:

33. Մրցույթի հայտարարվում է չկայացած մրցութային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

34. Մրցույթի չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական մրցույթը կազմակերպում և անցկացնում է չկայացած մրցույթից ոչ ուշ քան մեկ ամիս հետո: Կրկնական մրցույթը կազմակերպում և անցկացնում է մրցույթային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

35. Վերոհիշյալ կանոնների խախտմամբ անցկացված մրցույթը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Մրցույթն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

36. Մրցույթի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

III. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ /ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

37. Մրցութային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

38. Հանձնաժողովը իր կազմից հաստատում է մրցութավար:

39. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

40. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած անդամների կեսից ավելին:

41. Հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ մրցույթը կայացած ճանաչվելու, մրցույթի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին մրցույթի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ